

ՀԱՆԳԻՍՏ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ



ՀԱՆԳՈՒՅՅԱԼ ԳԵՐ. Տ. ԿԱՐԱՊԵՏ
Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳՄԵՐ)

Սույն թվի հունվարի 22-ի լույս առավոտյան, գիշերվա ժամը 11-ին, Թբիլիսիում, ուղեղի կաթվածով հանկարծամահ եղավ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, Թբիլիսիի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Կարապետ Արքեպիսկոպոս Թումանյանը:

Լուսահոգի Կարապետ Արքեպիսկոպոսը ծնվել է 1886 թվին, Արիմի թերակղզու Հին Արիմ բաղաբում: Ակզբնական կրթությունը

ստացել է տեղի ծխական դպրոցում, ապա տեղափոխվել Թբիլիսիի Ներսիսյան Թեմական Դպրոցը և հաջող ավարտել նրա լրիվ դասընթացը 1904 թվին: Կվպատորիայի Հայ Առաքելական Եկեղեցու համայնքի միջնորդությունով, 1913 թվին քահանա է ձեռնադրվել և քահանայագործել այնտեղ շուրջ 13 տարի: Իր վաչկած մեծ ժողովրդականության համար, Հոգևոր բարձրագույն իշխանության

կողմից պարզևատրվել է լանջախաչով: 1926 թվին տեղափոխվել և հաստատվել է Սիմֆե-րոպոլում, որպես տեղի հայոց եկեղեցու ա-վագ քահանա:

1945 թվին, երբ Ամենայն Հայոց Կաթողի-կոս Ս. Տ. Գեորգ Չորեքչյանի ջանքերով էջ-միածին ոտք դրեց զարթոնքի ուղու վրա, նա եկել է Մայր Աթոռ և ընդունել արեղայի կո-չում: Ս. էջմիածնում գղմարված Ազգային-Սեկեղեցական ժողովի կողմից ընտրվել է Գե-րագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Նորին Ս. Օծուխյան Գեորգ Կաթողիկոսի կողմից ձեռնադրվել եպիսկոպոս: Նույն տարին նշա-նակվել է Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ: Այստեղ հանգուցյալ Սրբազանը մեծ ջանք է գործադրել կազմակերպելու թեմի եկեղեցի-ները և կարգավորելու նրանց աշխատանք-ները՝ արժանանալով Նորին Վեհափառու-թյան ուշադրությանը:

1948 թվին նշանակվել է Թբիլիսիի թեմի Առաջնորդ լիովին ազդարացնելով իր վրա դրված հույսերը: Նոր Նախիջևանի և Թբի-լիսիի թեմական խորհուրդների կողմից Նորին Ս. Օծուխյան առջև հարուցված միջնորդու-թյամբ, հանգուցյալին շնորհվել է արքության

տիտղոս: Նա Թբիլիսիում մնացել է պաշտո-նավարության մեջ մինչև իր ողբերգական մահը:

Նուսահոգի Սրբազանը մեծ հեղինակու-թյուն էր վայելում իր պաշտոնավարած թե-մերում և Ս. էջմիածնի միաբանության մեջ. ուներ կազմակերպչական մեծ ջիղ և եկեղե-ցական բարձր պատրաստություն: Նրա զըր-չին են պատկանում պատմագիտական բո-վանդակություն ունեցող մի շարք աշխա-տություններ, որոնցից մի քանի նմուշներ հրատարակվել են «Արօր» և «էջմիածին» ամսագրերում:

Եկեղեցափրկությունը և հայրենասիրությու-նը հանգուցյալ Սրբազանի կյանքի բնորոշ գծերն էին. նա անսահման ջերմությամբ սի-րում էր Մայր Աթոռը և իր նվիրական Հայ-րենիքը — Սովետական Հայաստանը:

Մայր Աթոռի Միաբանությունը և նրան ճանաչող բոլոր անձինք սրտի կակիծով ող-բում են եկեղեցասեր, հայրենասեր, եռան-դուն և միշտ կենսուրախ Սրբազանի վաղա-ժամ մահը:

«Հիշատակն արդարոց օրհնությանը ելիցի»:

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ (ՂՐԻՄԵՑԻ) ԹԱՂՈՒՄԸ

Հունվարի 21-ին, երեկոյան ժամը 11-ին, կնքեց իր մահկանացուն Վրաստանի թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Կարապետ Արքե-պիսկոպոս Թումանյանը:

Սրբազան հայրը, որ այդ երեկոյան ուրախ ու զվարթ զրուցում ու կատակում էր իրեն ալցի եկած հյուրերի հետ, վերջինների մեկ-նելուց մի ժամ հետո՝ կաթվածահար է լի-նում: Հոգևորքը տևում է մոտ երկու ժամ:

Սրբազանի ծանր դրուժյան մասին անմի-ջապես հայտնում են թեմական Խորհրդի անդամներին, որոնք և շուտափույթ հրավի-րում են բժիշկների, սակայն չեն կարողա-նում փրկել Սրբազանին և նա հավիտենա-պես փակում է աչքերը:

Գիշերվա ժամը 2-ին Թեմական Խորհրդի անդամները խորհրդակցում են Մայր Աթոռից Թբիլիսի եկած Սահակ Մ. Վարդապետի հետ և որոշում են. ա) Հանգուցյալի դին տեղա-փոխել Թբիլիսիի մայր եկեղեցին, բ) ցավալի լուրի մասին հեռագրել Վեհափառ Հայրապե-տին և հրահանգ խնդրել թաղման մասին և գ) հունվարի 22-ին կիրակի Ս. Պատարա-գից հետո հոգեհանգիստ կատարել:

Կիրակի առավոտյան Սրբազան առաջնոր-դի մահվան գուժը կայծակի արագությամբ տարածվում է քաղաքում, ահաբեկի բազմու-

թյուն է լցվում եկեղեցի, ուր տեղափոխված էր Սրբազանի դին:

Ս. Պատարագին, հոգեհանգստից առաջ, Սահակ Մ. Վարդապետը արտասովոր աչքե-րով խոսում է իր առաջին դամբանականը և ողբում Սրբազանի մահը:

Երեկոյան ժամերգությունից հետո կա-տարվում է երկրորդ հոգեհանգիստը: Հան-գուցյալին հարգելու համար հավաքվել էր ա-հապին բազմություն: Վրաց Կաթողիկոս Կա-լիստրատի կողմից ներկա էին մի եպիսկո-պոս և երկու ավագ քահանաներ: Եկել էր իր ցավակցությունը հայտնելու նաև մահմեդա-կան հոգևորականության ներկայացուցչու-թյունը: Վրաց եպիսկոպոսը ուսերեն լեզվով մի ազդու դամբանական է խոսում և վրաց կաթողիկոսի և հոգևորականության կողմից ցավակցություն հայտնում հայ հոգևորակա-նության և հայ համայնքին այդ ծանր կո-րոտտի առթիվ:

Այսպես շարունակվում է նաև հետևյալ եր-կու օրերը, և ամեն երեկո հոծ բազմության ներկայությամբ, կատարվում են հոգեհան-գիստներ:

Հոգեհանգստյան կարգ են կատարում նաև ուսու և վրացի հոգևորականները, որոնք դամ-բանականներ խոսելով ուսերեն և վրացերեն

լեզուներով, իրենց կսկիծն ու ցափն են հայա- նում հայ համայնքին:

Սահակ Մ. Վարդապետը իր շնորհակալու- թյունն է հայտնում սովետական եղբայրա- կան հանրապետությունների հոգևորական ներկայացուցիչներին:

Ստացվում է Վեհափառ Հայրապետի կար- դադրությունը, որով հրամայվում է՝ հան- գուցյալի դին թաղել եկեղեցու գավթում, պարտ ու պատշաճ հարգանք տալ և այլն:

Որոշվում է հանգուցյալի դին հողին հանձ- նել կիրակի, հունվարի 29-ին, իսկ մինչև այդ՝ ամեն երեկո կատարել հոգեհանգստյան կարգեր, որոնց մասնակցում են Թբիլիսիի բոլոր հայ քահանաները, սրբակրոն կույսերը և ժողովրդի խումն բազմությունը:

Առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 10-ը ահագին բազմություն էր գալիս եկեղեցի՝ իր հարգանքը մատուցելու սրբա- զանի աճյունին:

Կարելի է ասել, որ այդ շաբաթը (հունվա- րի 22—29-ը) «արտասուքի շաբաթ» էր Թբի- լիսիի հայ հավատացյալ համայնքի համար: Շատերի աչքերում կարելի էր տեսնել արտա- սուք: Մարդիկ կան, որոնք մի քանի տասն- յակ տարիների ընթացքում անկարող են լի-

նում դիրք, հեղինակություն ստեղծել իրենց համայնքի մեջ, ստիպան հանգուցյալ Սրբա- զանը Վրաստանի թեմում տասն և հինգ ամ- սվա իր գործունեությամբ դրավեց ընդհա- նուրի սերն ու հարգանքը:

Հունվարի 25-ին զմտավում է դին և լվաց- ման ու զգեստավորման կարգը կատարելով՝ դին բաց դրվում է ի տես ժողովրդի:

Հունվարի 29-ին կատարվում է թաղման կարգը: Պատարագում է Սահակ Մ. Վարդա- պետը, որը և օժման կարգը կատարելով վեր- ջին դամբանականով իր հրաժեշտն է տալիս Սրբազանի աճյունին և առաջարկում հան- գուցյալ Սրբազանի հիշատակը հավերժացնե- լու համար մի սան պահել նրա անվան՝ Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, որը և ըն- դունվում է միաձայնությամբ:

Եկեղեցին, գավթից, գավթի մեջ եղած բնա- կարանների պատշգամբները լիքն էին բազ- մություններով: Ժողովրդական խոսքով՝ «ասեղ ղցելու տեղ չկար»:

Ս. Պատարագին ներկա էին վրաց կաթո- ղիկոսի ներկայացուցիչ եպիսկոպոսը՝ երեք ավագ քահանաներով: Սրբազանը ցանկու- թյուն է հայտնում խոսք ասելու: Հողաթափ- ներ են տրվում սրբազանին և նա առաջ-



Հանգուցյալ Կարապետ Աբեխյանի Թումանյանը դազալում:

նորովում է դեպի բեմ, ուր նրան տրվում են եպիսկոպոսական գավազան և ձեռքի խաչ: Սրբազանը վրացերեն լեզվով զգացված դամբանական է խոսում: Հայտնում է վրաց կաթողիկոսի ցավակցությունը հայոց ծերունազարդ Հայրապետին, Մայր Աթոռի միաբանությանը, Վրաստանի հայ հոգևորականության և հայ վշտալից համայնքին:

Սահակ Մ. Վարդապետը Հայ Եկեղեցու անունից իր շնորհակալությունն է հայտնում ուսաց, վրաց և մուսուլմանական հոգևորականության ներկայացուցիչներին, որոնք եղբայրական ջերմ սիրով եկան ցավակցություն հայտնելու Հայ Եկեղեցուն և մխիթարելու նրան՝ Սրբազանի ողբերգական մահվան առթիվ:

Ս. Պատարագի արարողությունը վերջացնելուց հետո, քահանաները համրաբայլ, շարականների երգեցողությամբ, եկեղեցու զանգերի տխուր ղողանջների և արտասովոր հոծ բազմության ուղեկցությամբ, դաբաղը դուրս

են բերում և դնում Սրբազանի հավիտենական օթևանի մոտ: Լուսանկարելուց և թաղման կարգը կատարելուց հետո, կնքվում է այն գերեզմանը, որը անժամանակ փորվեց կարապետ Սրբազանի համար:

Թաղման արարողությունը վերջանում է ժամը 3-ին, սակայն ժողովուրդը շի ցրվում մինչև ուշ երեկո:

Հանգուցյալ սրբազանի գերեզմանը պտնվում է Թբիլիսիի Ս. Գեորգ եկեղեցու հյուսիսային պատի տակ, ժողովրդական հանրահռչակ բանաստեղծ ու երգիչ Սայաթ-Նովայի և հայտնի նկարիչ Գեորգ Բաշինջաղյանի գերեզմանների կողքին:

Կարապետ Արքեպիսկոպոսի մահով վեհափառ Հայրապետը կորցրեց իր լավագույն միաբաններից մեկին, Ս. Էջմիածնի միաբանությունը՝ լավ ընկերոջը, և հավատացյալ համայնքը՝ իր քաջ հովվին, որից Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը տակավին մեծ սպասելիքներ ունեն:

